

## **Բառեր և արտահայտություններ**

Բառերն ու արտահայտությունները վիրավորելու, ինչպես նաև սփոփելու մեծ ուժ ունեն: Լրագրողը պետք է իմանա, թե այն խմբի անդամները, ում մասին գրում է, ինչպես են նախընտրում, որ իրենց անվանեն: Հաճախ հաշմանդամություն ունեցող անձանց մասին գրելիս լրագրողն օգտագործում է բժշկական բառերը՝ վերցնելով դրանք մարդու հիվանդության պատմությունից, որոնք սակայն ոչինչ չեն ասում նրա դժվարության կամ խնդրի մասին, այլ միայն ավելորդ կարծրատիպ են ստեղծում անձի նկատմամբ՝ ներկայացնելով որպես հիվանդ ու անկարող մարդու: Նման բացասական օրինակներ են՝ անկարող, դերիլ, ոչ նորմալ, ֆիզիկական դեֆեկտ, անվասայլակին գամված, տառապում է ցերեքրալ պարալիչից, պոլիոմիելիթի զոհ, հիվանդ, թույլամիտ երեխա և այլն:

Դրամատիկ երանգներ են ստեղծում «դառը ճակատագիր» կամ «ողբերգական պատահարի բերումով հաշմանդամ դարձած» արտահայտությունները:

ՉԼՄ-ներում մեծ տարածում ունի «զոհ» բառը, որը բացի անօգնական, խեղճուկրակ, անզոր մարդու հիշեցնելուց՝ ստեղծում է ողբերգական պատկեր:

### **Միայն տարբերակներ**

- թերարժեք կամ անկարող
- սահմանափակ հնարավորություններով
- նա աուտիկ է
- դաուն է
- նա գաճաճ է
- նա գամված է սայլակին
- նա թերզարգացած է
- բնածին դեֆեկտ ունի
- նա հատուկ խնամքի կարիք ունի
- նա խուլուհամր է
- տառապում է ուղեղային կաթվածով

### **Նախընտրելի տարբերակներ**

- Հաշմանդամություն ունեցող մարդիկ
- մտավոր խնդիր ունի
- նա աուտիզմ ունի
- Դաունի համախտանիշ ունի

- սովորելու դժվարություններ ունի
- նա սայլակ է օգտագործում
- շփվում է աչքերով, սարքերի օգնությամբ և այլն
- նա չի լսում կամ խուլ է
- տեսության ինդիք ունի

### **Կարևոր է հիշել՝**

- «հաշմանդամ» բառը չի կարելի օգտագործել որպես գոյական,
- բառը չի կարելի օգտագործել բացասական իմաստով,
- «հաշմանդամություն ունեցող անձ»-ի հակառակ իմաստը «նորմալ», «առողջ» կամ «լիարժեք» բառերը չեն, այլ՝ ոչ հաշմանդամ կամ հաշմանդամություն չունեցող: